ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը		*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Փոխըմբռնման հուշագիր	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԱԳՆՊՏ 2017.07.26/1(38)	*Ընդունման վայրը*	Դուբայ
Ընդունող մարմինը	Հայաստանի Հանրապետություն	*Ընդունման ամսաթիվը*	10.11.2016
Ստորագրող մարմինը		*Ստորագրման ամսաթիվը*	10.11.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	04.05.2017	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Փ Ո Խ Ը Մ Բ Ռ Ն Մ Ա Ն Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների Ազգային անվտանգության գերագույն խորհրդի արտակարգ իրավիճակների, ճգնաժամերի և աղետների կառավարման ազգային վարչության միջև արտակարգ իրավիճակների ոլորտում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը և Արաբական Միացյալ Էմիրությունների արտակարգ իրավիճակների, ճգնաժամերի և աղետների կառավարման ազգային վարչությունը (այսուհետ՝ Կողմեր),

ընդունելով արտակարգ իրավիճակների ոլորտում իրենց պետությունների իրավասու մարմինների միջև համագործակցության կարևորությունը,

հաշվի առնելով իրենց պետությունների միջև համագործակցության դրական փորձը, նպատակ ունենալով ավելի ամրապնդել փոխըմբռնումը և բարեկամական համագործակցությունը,

ընդունելով իրենց երկրների բնակչության անվտանգության և կայուն տնտեսական զարգացման ապահովման նպատակով համաձայնեցված միջոցառումների անցկացման անհրաժեշտությունը,

ընդունելով բնական և մարդածին արտակարգ իրավիճակների կանխման, հետևանքների վերացման և տուժած բնակչությանն աջակցության միջոցառումների իրականացման համար մարդկային, գիտական, տեխնիկական, տեխնոլոգիական և տեղեկատվական ներուժի փոխադարձ օգտագործման անհրաժեշտությունը,

հաշվի առնելով արտակարգ իրավիճակների ոլորտում տեղեկատվության երկկողմ և բազմակողմ փոխանակումների օգտակարությունը,

ձգտելով ճիշտ գնահատել Կովկասի և Միջին Արևելքի երկրների՝ աղետներին դիմակայելու պատրաստվածությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Համագործակցության ոլորտները

Կողմերը, սույն Փոխըմբռնման հուշագրին (Հուշագիր), իրենց երկրների օրենսդրությանը և միջազգային իրավունքի չափանիշներին համապատասխան, համագործակցություն կիրականացնեն հետաքրքրություն ներկայացնող հետևյալ ոլորտներում.

1) արտակարգ իրավիճակների կանխում, բնակչության և տարածքների պաշտպանություն, որոնողափրկարարական գործողություններ,

2) բնական և մարդածին աղետների կանխում, հետևանքների վերացում,

3) վտանգավոր մարդածին գործընթացների, էկոլոգիական իրավիճակի և բնական երևույթների մշտադիտարկում,

4) տեղեկատվության և առաջավոր տեխնոլոգիաների փոխանակում,

5) գիտական և տեխնիկական նախագծերի և գիտական հետազոտությունների արդյունքների, տեսանյութերի և պատկերային նյութերի համատեղ մշակում և զարգացում,

6) արտակարգ իրավիճակների կառավարման համար պատասխանատու պատվիրակությունների այցելություններ և փորձի փոխանակում,

7) արտակարգ իրավիճակների ոլորտի անձնակազմի մասնագիտական հմտությունների բարձրացման նպատակով սեմինարների, աշխատաժողովների և դասախոսությունների կազմակերպում:

Հոդված 2
Պատասխանատուները

Յուրաքանչյուր Կողմ կնշանակի մեկ կամ ավելի համակարգողներ, որոնք պատասխանատու կլինեն սույն Հուշագրի դրույթների առնչությամբ Կողմերի միջև համակարգման և հաղորդակցության համար:

Կողմերը դիվանագիտական ուղիներով կհաղորդեն նշանակված համակարգողների անունը, ազգանունը, պաշտոնը և կոնտակտային տվյալները:

Հոդված 3
Ծախսերը

Յուրաքանչյուր Կողմ կհոգա սույն Հուշագրի շրջանակներում իրականացվող համագործակցությունից բխող իր ֆինանսական ծախսերը, եթե այլ համաձայնություն ձեռք չի բերվել:

Հոդված 4
Փոփոխությունները

Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությունների տեսքով և կկազմեն սույն Հուշագրի անբաժանելի մասերը:

Հոդված 5
Հարաբերությունները

Սույն Հուշագրի դրույթները չեն ազդում Կողմերի պետությունների մասնակցությամբ միջազգային այլ համաձայնագրերից բխող Կողմերի իրավունքների և պարտավորությունների վրա:

Հոդված 6
Վեճերը

1. Եթե սույն Հուշագրի մեկնաբանման կամ իրականացման առնչությամբ որևէ վեճ է ծագում, Կողմերը պետք է ձգտեն հնարավորինս արագ կերպով կարգավորել այն ուղիղ բանակցությունների միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, դիվանագիտական ուղիներով և վեճը կարգավորելու համար չպետք է դիմեն որևէ ազգային կամ միջազգային դատարան կամ երրորդ կողմի:

2. Վեճի դեպքում սույն Հուշագրի դրույթները կշարունակեն կիրառվել մինչև վեճի վերջնական կարգավորմանը հասնելը:

Հոդված 7
Ուժի մեջ մտնելը, դադարեցումը

1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում վերջին ծանուցումն ստանալու օրվանից, որով Կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին տեղեկացնում է, որ դրա ուժի մեջ մտնելու համար բոլոր անհրաժեշտ իրավական ընթացակարգերն ավարտվել են և կգործի հինգ (5) տարի ժամկետով: Գործողության ժամկետն ինքնաբերաբար կարող է երկարաձգվել համանման հինգ (5) տարի ժամկետներով:

2. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել սույն Հուշագրի գործողությունը՝ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Այդ դադարեցումն ուժի մեջ կմտնի մյուս Կողմի ծանուցումը ստանալու ամսաթվից երեք ամիս հետո:

3. Սույն Հուշագրի դադարեցումից հետո Կողմերը կշարունակեն կրել դրանից բխող պատասխանատվությունը և կատարել իրենց պարտավորությունները՝ մինչև դրանց իրականացումը:

Կատարված է Դուբայ քաղաքում, 2016 թվականի նոյեմբերի 10-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն: Բոլոր տեքստերը հավասարազոր են: Հայերեն և արաբերեն տեքստերի տարբեր մեկնաբանությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Ի վկայումն որի՝ Կողմերի պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչները ստորագրեցին սույն Հուշագիրը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2017թ. մայիսի 4-ին